ԳՈՐԻՆԵ

ՎԱՐԴԱՊԵՏԻ

Պատմական վեպ Խ. Հովհաննէսի
Սէյֆի Մելիքեանց.

ԶՄԻՒՐՆԻՍ
Ի ՄԵՍՐՈՊԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ
1843

ՀԱՅԿԱԶՈՒՆԻՑ Թ. ԱՂԱՅԻԱՆ Ի ԹԻՖԼԻՍ

ԿՈՐԻՆԹ

ԱՌԱՔԵԼՈՅՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՌԱՔԵԼՈՅ ԵՒ ՄԱՀՈՒՆՆ

ՍՐԲՈՅՆ

ՍԱՆՍՐՈՎԲԱՅԻ

676 ԿԱ

Ի ՕՄԻՒՌԻՆԱ

Ի ՄԱՍՐԱՊԱՆԱՆ ՏՊԱՐԱՆԻ

1843 ԹՒԱԿԱՆ

ԳԵՐ. ԳՐԱԳԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՆԳԱՐԱՆ

Պատմութիւն

Վարուց եւ Մահուան Սրբոյ առն Երանելւոյ

Մեսրոպայ Վարդապետի մերոյ
Լուսաւորչի։

Բարձեալ 'ի Կարին Վարդապետէ
յաշակերտէ Նորին։

ՕՐԱԳԻԵՆ ԱՅՆԻԵՆ

ազգին և հայաստան աշխարհին զասուուածապարգև գրոյն, եթէ երբ և յորմէ ժամանակի մատակարարեցաւ, և որպիսի արամբ այնպիսի նորոգատուր աստուածեղէն շնորհս երևեցաւ. և վասն նորին լուսաւոր վարդապետութեան, և հրեշտակաբար կրօնիցն առաքինութեան զմտաւ ածելով յիշատակարանս առանձին մատնանշան ծաղկեցուցանել։ Յետ մինչ դեռ անդէն 'ի խորհրդանոցի մտացն, վասն յուշ արկանելոյ միայնագործ հոգացայ. եկեալ հասանէր առ իս հրաման առն միոյ պատուականի Յովսէփ կոչեցելոյ աշակեր-

ցի առն այնորիկ. եւ ընդ նմին այլոց եւս, քաջալերութիւնն աշակերտակցաց մերոյն, վարդապետութեան: Ուստի եւ իմ մասնաւոր աշակերտութեամբ փոքրիկ առեալ թէպէտ եւ էի կրտսերագոյն եւ առաւել քան զկար մեր. զբաւեալ անուշաւ հրամանին հասելոյ, փութանակի եւ առանց յապաղելոյ զառաջի եղեալն մատենագրել, Օրուս եւ մեր համօրէն աղաչեալ երկախառնել ընդ մեզ աղօթիւք յանձնարարութեամբ աստուածեղէն շնորհացն, զի կամակարագոյնս և ուղղագոյնս նաւիցեմք զհամատարած աթոռքն վարդապետական ծովուն:

Եւ արդ առեալ նախաբանեսցուք, եթէ իցէ համարձակութիւն գրով նշանակել զվարս արանցն կատարելոց. ոչ 'ի մէնջ արուեստախօսեալ մերոյն կարծեաք վիճաբանելով, այլ յօրինակացն ստուերոյ զընդդիմակացն բարձրացուցանել: Զանգի Աստուծոյ բարերարին այսպէս բարեխորհեալ զիւրոց սիրելեաց, ոչ միայն ըստ առաքինութեան վարուց՝ զ չքնաղ և զբարձրագոյն հատուցումն բաւական համարել յանսպառ յաւիտեանսն, այլ և ստէպ խսկ կանխագոյն. զի անցաւոր ժամանակքս մատենաշատում երկնարերձ պայծառացուցեալ զհոգեղինացն և զմարմնակացնացն, առ հասարակ փայլիցեն:

Եւ 'ի մովսիսական պատմութեան յայտնի է երանելեաց արանցն աղնուականութիւն, Աշմարտութեան հաւատոցն հաստատութիւն, աստուածամերձ աստուածամուխ կենացն վայելչութիւն, սքանչելական կենացն պայծառութիւն։ Զի ոմն ընդունելի պատարագաւ արդար կոչեցեալ։ Եւ այլ ոմն հաճոյական արուեստին 'ի վերայ ամենակուլ մահուանն կենօք երևեալ։ Եւ միւս ոմն բովանդակ արդարութեամբ 'ի վերայ համատարած լեռնացելոյ աստուածապատիժ ծովուն, հանդերձ ամենայն շնչականօք տարեւոր ժամանակօք նաւակայ պահեալ։ Եւ միւսոյն յանկարծագիւտ հաւատովք արդարացեալ. աստուածամերձ աստուածախօս դաշնաւոր կատարեալ, և զաւետիս հանդերձելոց բարեացն ժառանգեալ։ Բազմօք և այլ նոյնպիսիք աստուածածանօթ գտեալք. որոց աղնուականութիւնքն յամենայն աստուածածանօթ գրոց պատմի։ Զանոնցն ասացելոյս երանելոյն Պաւղոսի առ եբրայեցիսն կարդեալ զանունս՝ զովք գնոցին Աշմարտութիւն հաւատոցն. որով զվարձահատոյց միսիթարութիւն ընկալան յամենապարգևողէն Աստուծոյ, ըստ իւրաքանչիւր յառաջադիմութեանցն։ Նա և զժանդագործին Բա-

հաբու զՀիւրընկալութիւն լրտեսացն հա-
մնմատէ ։

Իսկ իբրև հայեցեալ 'ի բազմախուռն
դումարութիւն , արդարև զսակաւուցն զա-
նուանս յայտ առնէ . և զայլովք ևս զանց
առնէ , անբաւական զժամանակն առ 'ի
կարգի պատմելոյ ։ 'Ի կիր արկանէ այնու-
հետև նշանակել միանգամայն զփորձու-
թիւնս 'ի վերայ յարձակեալս . և նոցա
զանընդդիմակաց զնահատակութիւնսն ,
զորս և պատուականս քան զաշխարհս առ
վաճառ համարի ։ Այն օրինակ և ամե-
նայն գիրք հոգեպատումք նշանակեալ ու-
նին զբաջութիւնս ամենայն զօրաց . զոմանց
ըստ աստուածեղէն կրօնիցն զբարեյաղթու-
թիւն , և զոմանց ըստ աշխարհաղիր կար-
գաց զմարտից և զպատերազմողաց սրու-
թիւնսն . որպէս զԵբրոտայն և զԱմփ-
սոնին և զԴաւթայն ։ Եւ զոմանց զբնա-
կան զիմաստութիւն գովեալ աստուածեղէն
իմաստութեամբն հանդերձ . որպէս զՅով-
սեփայն Յեգիպտոս , և զԴանիէլն 'ի
Բաբիլոն ։ Յորոց և հզօր թագաւորացն
խրատիչք էին , զաշխարհակալ կենցաղոյս
զհանգամանսն ցուցանէին , հանդերձ ա-
մէնիշխանին Աստուծոյ ծանօթս առնելով ։
Որոց և մարգարէին իսկ գովեալ զի-

մաստութիւնն , ասէր ցոմն այսպէս ։ "Մի թէ իմաստնագոյն իցես քան զԴանի. էլ ։ կամ իմաստունք խրատուք խրատեցին զքեզ հանճարով իւրեանց" ։ Եւ ոչ այս. չափ միայն ։ այլ և հոգեկան ազգին հը. րեշտակութեամբ՝ գովեալ զսրբոյն զօրու. թիւն , որ զԴանիէլ ցանկալի քարոզե. լովն կոչէին ։ և զսուրբ տիրամայրն 'ի Գալիլեայ՝ օրհնեալ 'ի կանայս ։

Բայց զինչ ասիցեմք զզուգանացն զառ 'ի միմեանց պատուեալ զգովութիւնս ։ զո. բոց և Տէրն իսկ ամենայնի՝ բերանալիր գոչէր զաշնուականութիւնսն ։ ոչ միայն զյանդիմանական գործոյն , այլ և զծա. ծուկ սրտիցն լուսաւորութիւնսն , առաջի հրեշտակաց և մարդկան բերէ ։ Որպէս զհիւրամեծարին Աբրահամու , հրեշտա. կօքն հասելովք զծառայական հաւասարու. թիւնն յայտ արարեալ ։ պատմելով նմա յետ աւետեացն ընկալելոց , զինչ 'ի Սո. դոմն էր գործելոց ։ Այոյնպէս և զքաջի նահատակին Յորայ յառաջ քան զպատե. րազմել առաջի պատերազմականին՝ յօրինէ զգովութիւն ասելով ։ "Այր ճշմարիտ ար. դար և աստուածապաշտ , և որոշեալ յա. մենայն գործոց չարաց" ։ Իսկ մեծին Մով. սէսի զառաւելագոյն զաստուածամուխ մեր.

ձաւորութիւն ամենայն եկեղեցական դրով հնչեցուցեալ . զորոյ և զտղայութեան գլխայտառութիւնն յայտ արարեալ աստուածեղէն օրինացն . նա և զայլազգոյն զՀոթորի ևս զխրատն՝ չանցուցեալ անգիր ։

Եւ այնպէս միահամուռ ամենայն աստուածակրօն արուեստականացն բարեգործութիւնք՝ փայլեն յաստուածագիր օրինացն , զորոց չէ ոք բաւական յիշատակել զերանելի անուանց գումարութիւն ։ Եւ ոչ միայն զյառաջագունիցն , այլ և զկնի եղելոցն զմիածնի որդւոյն Աստուծոյ փրկչին ամենեցուն , 'ի լուսաբեր աւետարանին իւրում ծաղկեցուցանէր զազնուականութիւնս , մանաւանդ երանութեամբ իսկ պսակէր . ոչ միայն սեպհականացն զերկոտասանիցն , և կամ զյառաջամուտ լոզ Կարապետին , այլև զայլոց մատուցելոցն՝ գովէ և զհաւատոցն Ճշմարտութիւն ։ Զանգի զնախանայէլ առանց նենգութեան նըշանակէ . և զթագաւորազին զմեծութիւն հաւատոցն՝ անգիւտ Իսրայէլի ասէ ։ Բայց ոչ միայն զմեծամեծսն , այլ առաւել ևս զթեթեւագոյնսն բարձրագոյնս՝ անարգամեծարն Քրիստոս . որ սակաւիկ ինչ զծախ իւղոյն յարդէ , և զծախսեղեացն յիշատակարան պատմեն ամենայն ուրեք՝

առ 'ի ներքոյ երկնից ։ Եւ զկնոջէն քա-
նանցւոյ մեծ զհաւատոյն ասէ . նաև
զդանկաց երկուց ընծայելոցն՝ կովէ զա-
րեացն զյօժարութիւն առաւել քան զմե-
ծացն ։ Իսկ Պաւղոս 'ի մտի եդեալ էր
շրջեցուցանել զքրիստոսադիր կարգացն
պայծառութիւնն , անօթ ընտրութեան ա-
նուանեալ . անուանակիր յաշխարհի իւրոյ
սքանչելի անուանն առնէ ։

Պատն որոյ երանելոյն հայեցեալ 'ի
շնորհացն բարձրութիւնսն առ իւրոյ մեծ
օրինացն , և առ ամենայն սրբոցն . բարձ-
րագոյն բարբառով 'ի փառաբանութիւն դառ-
նայ . եթէ "Շնորհք Աստուծոյ , որ յա-
մենայնի հոչակ հարկանէ զմէնջ 'ի Քրիս-
տոս . և զհոտ գիտութեան իւրոյ յայտնի
առնէ մեզ յամենայն տեղիս" ։ 'Ի վերայ
այնորիկ ապա և զհամարձակագոյնն բերէ ,
թէ ո՞ կարէ քիծ դնել ընտրելոց Աստու-
ծոյ ։ Եւ զայս օձան ընկալեալ 'ի Տեառ-
նէ երանելի առաքելոցն , զամենայն գոր-
ծակցաց իւրեանց գրով նշանակել զքա-
ջութիւնս . տեսանել զոմանց 'ի սուրբ ա-
ւետարանին և զոմանց 'ի գործս առաքե-
լոցն երանելոյն Պուկասու մատենագրեալ .
և իցեն որ 'ի կաթուղիկէս առաքելոցն ա-
ռաւելագոյնս ճանաչին ։

Բայլ սրբոյն Պաւղոսի չորեքտասանեքումբք թղթովք պատմէ զիւր առաքելակիցս, և նիզակակիցս և ուրախակիցս իւր առնէ. և 'ի վախճանի թղթոցն, ըստ իւրաքանչիւր ումեք յողջոյն կատարեալ՝ յանուանէ հարցանէ. և զուրումն յաւետարանէ անտի նշանակէ զդովութիւնն։ Բայց ոչ միայն զերանելւոյն զօգնականութիւնն յարգէ. այլ և զքրիստոսամեծար ասպնջականիցն իւրոց՝ բազում գովութիւնս փոխանակ մեծարանացն կարգէ, վասն որոյ և յաղաչանս առ Աստուած մատուցեալ՝ զփոխարէն բարեացն հատուցանել հայցէ։ Այս ամենայն եկեղեցեօք հնչեցուցանէ զընտրելոցն զաղնուականութիւն. ոչ միայն զարանցն այլև զկանանցն աշակերտելոց, որ զՔրիստոսութիւնն աւետարանեն։

Եւ զայս ամենայն աւետարանեալ ոչ 'ի պարծանս գովութեան, այլ զի օրինակ և կանոն զկնի եկելոցն պաշտիցի։ Որպէս 'ի նոյն իսկ զի բարեաց գործոց նախանձաւորս լինել ամենեցուն՝ ստիպէ ասելովն, թէ "Օ՜հեա երթայք սիրոյ. և նախանձաւոր լինել ամենեցուն հոգևորացն"։ Որոց զյօժարութիւն աքայեցւոց վասն պաշտաման սրբոյն 'ի Մակեդոնիա պատմեալ՝

նախանձեցուցեալ յորդորեաց։ Այլև համարձակութիւն իսկ տայ անխափան 'ի բարեացն առաքինութիւն. թէ "Լաւ է յամենայն ժամ նախանձել 'ի բարին"։ Այլ և նմանօղ իւր և Տեառն ստիպէ լինել։

Դարձեալ փութայ ամենքումբ հանդերձ ըստ Քրիստոսի հետոյն վարել, "Հայեցարուք, ասէ, 'ի զօրագլուխն հաւատոց. և 'ի կատարիչն Քրիստոս"։ Եւ դարձեալ, թէ "Յիշեցէք զառաջնորդս ձեր, որք խօսեցան զբանն Աստուծոյ. հայեցեալ յելս գնացից նոցա, նմանօղք եղերուք հաւատոցն"։ Եւ միանգամայն, եթէ "Զայս խորհեսցի իւրաքանչիւրոք 'ի ձէնջ որ և 'ի Քրիստոս Յիսուս"։ Հանգոյն սմին և Ղուկաս յսկիզբն առաքելագործ մատենին դնէ։ Իսկ յանկալի Տեառն եղբայրն Յակոբոս, զհամօրէն իսկ զգունդն սրբոց հանդերձ սրբասէր տերամբն յօրինակ առեալ՝ 'ի թղթին իւրում ասէ, եթէ "Օրինակ առէք չարչարանաց և յերկայնմտութեան զմարգարէսն, որ խօսեցան յանուն Տեառն. զհամբերութիւն Յոբայ լուարուք, և զկատարումն Տեառն տեսէք"։

Յայտնի է այսուհետև ասացելովքս, եթէ գովութիւն ամենայն աստուածասէր

ընտրելոցն 'ի Տեառնէ է . որ 'ի հրեշտակաց , որ առ 'ի միմեանց , ոչ 'ի պարծանս անձանց՝ այլ առ 'ի նախանձուկս միմեանց արկանելոյ զմիմեանսիք , քաջալերեալք հաստանիցեմք 'ի բարեացն կատարումն՝ 'ի նշանակեալ նպատակն երանելոյն Պաւղոսի , եթէ "Մի՞թարան հաստանել 'ի չափ հասակին Քրիստոսի" : Որոյ աղատութիւնն 'ի յերկինս է , ակն ունել փրկչին մեծին Աստուծոյ : Ունիմք և զկանոնական յաջորդեալ յառաքելոցն անտի զշնորհապատում գրեալսն , եթէ օրպէս մեծարեալք 'ի միմեանց , գովեալք ըստ Աշմարիտ հաւատոյն և ըստ աւետարանագործ կրօնիցդ . մինչև ցայսօր ժամանակի նովին սովորութեամբ վարին :

Այլ արդ առեալ յերկոցունց համարձակութիւն 'ի կիր արկանել և զվարս առն արդարոյ , արդ այսուհետև և խոստացեալն առաջի դիցի . և հայրենակատար մեծարեալ պայմանաւ , որ առ 'ի մէնջ հաճեսցի , և նոցա քաղցրատուր հրաման հատուցեալ զարդարեսցի :

ԱՄՆ զոր 'ի նախակարդ բանիս նշանակեմք , վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ , էր Մաշթոց անուն 'ի

տարօնական զաւառէն , 'ի Հայկակայ գեղ-
ջէ , որդի առն երանելւոյ Պարդան կո-
չեցելոյ ։ 'Ի մանկութեան տիսն փարժեալ
հելլենական դպրութեամբն , եկեալ հա-
սեալ 'ի զաւառն արշակունեաց թագաւո-
րաց Հայոց մեծաց , կայեալ յարքունա-
կան դիւանին , լինել ոպասաւոր արքայա-
տուր հրամանին առ հազարապետութեամբն
աշխարհիս Հայոց Ղուանայ ուրումն ։
Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհա-
կաց կարգաց , ցանկալի եղեալ ղենուորա-
կան արուեստիւն իւրոց զօրականացն , և
անդէն ուշ եդեալ փութով ընթերցուա-
ծոյ աստուածեղէն գրոց , որով առ ժա-
մայն լուսաւորեալ և թեամուխ միջամուխ
յաստուածատուր հրամանացն հանգա-
մանս , և ամենայն պատրաստութեամբ
զանձն զարդարեալ , հարկանէր զնշխա-
նացն սպասաւորութիւնսն ։

Նա յետ այնորիկ ըստ աւետարանական
չափուցն՝ 'ի ծառայութիւն Աստուծոյ մար-
դասիրին դարձեալ , մերկանայր այնուհե-
տև զնշխանակիր ցանկութիւնսն . և ա-
ռեալ զխաչն պարծանաց , երանէր զկնի
ամենակեցոյց խաչելոյն ։ Նա հաճեալ հր-
ամանացն 'ի խաչակիր գունդն Քրիստոսի
խառնէր , և անդէն վաղվաղակի 'ի միայ-

նակեցական կարգ մնանէր . բազում և աղգի ազգի վշտակեցութիւն ըստ աւետարանին կրէր ամենայն իրայ : Ամենայն կրքութեամբ հոգևորացն զանձն տուեալ միաւորութեամբ , լեռնակեցութեան , քաղցի և ծարաւոյ և բանջարաճաշակութեանց , արգելանաց անլուսից , խարազնազգեստ և զեռնատարած անկողնոց : Եւ բազում անգամ զհեշտական հանդիստ դիշերոյն և զհարկ քնոյ յոտնաւոր աքնութեանն 'ի թօթափել ակն վճարէր : Եւ զայս ամենայն առնէր ոչ սակաւ ժամանակս , և գտեալ ևս զոմանս յինքն յարեցուցանէր աշակերտեալ նմին սովորական աւետարանութեան . և այնպէս ամենայն փորձութեանց 'ի վերայ հասելոց՝ կամոյական քաջութեամբ տարեալ և պայծառացեալ , ծանօթական և հաճոյ լինէր Աստուծոյ և մարդկան :

Ուրեալ այնուհետև երանելոյն զհաստատացեալս իւր , դիմեալ էջանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողգթան : Այլ և ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողգթան , այր երկիւղած և աստուածասէր , ըստ աշակերտայ հաւատոցն Քրիստոսի : Իսկ երանելւոյն վաղվաղակի զաւետարանական արուեստն 'ի մէջ առեալ , ձեռն արկանէր

զդաւառումն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին . զերեալ զամենեսեան 'ի հայրենեաց աւանդելոց , և 'ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն՝ 'ի հընազանդութիւն Քրիստոսի մատուցանէր ։

Եւ յորժամ 'ի նոսա զրանն կենաց ներմանեալ , յայտնի իսկ բնակչաց գաւառին՝ նշանք մեծամեծք երեւէին , կերպակերպ նմանութեամբ դիւայն փախստական լինելով , անկանէին 'ի կողմանս Մարաց ։ Այնպէս առաւել հոգ 'ի մտի արկանէր՝ զհամաշխարհականս սիրելով . և առաւել յաղօթս մշանջենաւոր ունչս , և բազկատարած պաղատանս առ Աստուած . և արտասուս անդադարս . զմտաւ ածելով զառաքելականն և ասէր հոգալով ։ "Տրտմութիւն է ինձ և անպակաս ցաւք սրտի իմոյ , վասն եղբարց իմոց և ազգականաց" ։

Եւ այնպէս տրտմական հոգով պաշարեալ և թակարթապատեալ և անկեալ 'ի ծուփս խորհրդոց , եթէ ո՞րպիսի արդեօք ելս իրացն գտանիցէ ։ Եւ իբրև աւուրս բազումս անդէն 'ի նմին դեգերէր , յարուցեալ այնուհետև հասանէր առ սուրբ կաթուղիկոսն Հայոց մեծաց , որոյ անունն Ճանաչէր Սահակ , զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ ։ Եւ

միանգամայն յօժարութեամբ գումարեալ հանդերձ աղօթիւք մեծովք առ Աստուած կանխէին, վասն ամենայն ոգւոց քրիստոսաբեր փրկութեանն հասանելոյ. և զայն առնէին աւուրս բազումս։ Ապա ելանէր նոցա պարգևական յամենաբարին Աստուծոյ, ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և գիրս նշանակրոյ Հայաստան ազգին, հասանել բազում հարց փորձի. և քննութեան զանձինս պարապեցուցեալ, և բազում աշխատութեանց համբերեալ, ազգ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Ռամշապուհ։

Յայնժամ պատմէր նոցա արքայն, վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս աղփաբետաց Հայերէն լեզուի։ Յւ իբրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն գրելոյն 'ի Դանիէլէ, յօժարեցին զարքայ՝ փոյթ առնել վասն պիտոյիցն այնոցիկ։ Յւ նա առաքէր զոմն Ռահրիճ անուն հրովարտակաւ առ այր մի Խրէց, որոյ անուն Հաբէլ կոչէին. որ էր մերձաւոր Դանիէլի ասորւոյ եպիսկոպոսի։

Իսկ Ֆաբէլին զայն լուեալ , փութա-
նակի հասանէր առ Դանիէլն , և նախ
ինքն տեղեկանայր 'ի Դանիէլէ նշանա-
գրոյն , և ապա առեալ 'ի նմանէ առաքէր
առ արքայն յերկիրն Ֆայոց . 'ի հինգե-
րորդի ամի թագաւորութեան նորա 'ի նա
հասուցանէր : Իսկ արքային հանդերձ մի-
աբան սրբովն Սահակաւ և Մաշթոցիւ՝
ընկալեալ զնշանագիրսն 'ի Ֆաբէլէն , ու-
րախ լինէին : Ապա առեալ երանելի հա-
գաբարձուացն զյանկարծագիւտն , խընդ-
րէին հայցէին և յարքայէ մանկունս մա-
տաղս , որով զնշանագիրսն մարթեսցեն :
Ու յորժամ բազումք 'ի նոցանէ տեղե-
կանային . ապա հրաման տայր ամենայն
ուրեք նովին կրթել . որով և յաստիճան
իսկ վարդապետութեան դեղեցիկ երանելին
հասանէր . և իբրև ամն երկու կարգեալ
զվարդապետութիւն իւր . և նովին նշա-
նագրովք տանէր :

Իսկ իբրև 'ի վերայ հասեալ թէ չեն
բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղո-
բայս և զկապս հայերէն լեզուոյն , մանա-
ւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դըպ-
րութեանց թաղեալք և յարուցեալք դիպե-
ցան :

Յետ այնորիկ դարձեալ կրկին անդամ

ԱՄՍՕՐ

'ի նոյն հոգս դառնային, և նոքին ելս խնդրէ-
ին ժամանակս ինչ։ Վասն որոյ առեալ
երանելոյն Մաշթոցի դաս մի մանկաւոյ
հրամանաւ արքայի, և միաբանութեամբ սրբ-
բոյն Սահակայ, և հրաժարեալք 'ի մի-
մեանց համբուրիւ սրբութեանն՝ խաղայր
գնայր 'ի հինգերորդ ամի Վռամշապհոյ
արքային Հայոց, և երթեալ հասանէր 'ի
կողմանս Ուրամի՝ 'ի քաղաքս երկուց Ասո-
րոց. որոց առաջինն Եդեսիա կոչի, և
երկրորդն Ամիդ անուն։ Ընդդէմ լինէր
սուրբ եպիսկոպոսացն. որոց առաջնոյն
Բաբիլաս անուն և երկրորդին Ակակիոս.
հանդերձ կղերականօքն և իշխանօքն քա-
ղաքին պատահեալ, և բազում մեծարանս
ցուցեալ հասելոյն, ընդունէին հոգաբար-
ձութեամբ, ըստ Քրիստոսի անուանելոյն
կարգի։

Իսկ աշակերտասէրն վարդապետին՝ զտա-
ղեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զո-
մանս յասորի դպրութեանն կարգէր, և
զոմանս յունական դպրութիւնն։ Ընտի
'ի սամուսատական քաղաքն գումարէր, և
նորա իւրովք հաւասարօք զսովորականն ա-
ռաջի եդեալ զաղօթս և զանձնութիւնս և
զպաղատանս արտասուալից, զխստամբե-
րութիւնս, զհոգս զաշխարհահեծս, յի-

ջելով զասացեալսն մարգարէին , եթէ "Յորժամ հեծեծեսցես , յայնժամ կեցցես"։

Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օգնան գտանելոյ։ Որում պարգևէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և աբանչելի սուրբ աջովն իւրով , նշանակիրս հայերէն լեզուին։ Եւ անդ վաղվաղակի նշանակեալ անուանեալ և կարգեալ , յօրինէր սիղոբայիւք և կապօք։ Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց , հանդերձ օգնականօք իւրովք իջանէր 'ի քաղաքն սամոսատացւոց , յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն մեծարեալ լինէր։ Եւ անդէն 'ի նմին քաղաքի զրիչ ոմն հելլենական դպրուն Հոռիանոս անուն գտեալ. որով զամենայն ընտրութիւնս նշանագրոյն զնրբագոյնսն զկարճն և զերկայնն , զառանձինն և զկրկնաւորն , միանգամայն յօրինեալ և յանկուցեալ , 'ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք , աշակերտօքն իւրովք. որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին , յԵկեղեաց գաւառէն , և երկրորդին Յովսէփ անուն՝ 'ի պաղստական տանէն։ Եւ

եղեալ սկիզբն նախ յառակացն Սողոմոնի, որ 'ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ "Ճանաչել զիմաստութիւն և զխրատս, իմանալ զբանս հանճարոյ"։ Որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի. հանդերձ ուսուցանելով մանկունս գրիչս նմին դպրութեան։

Ապա յետ այնորիկ առնոյր թուղթս յեպիսկոպոսէ քաղաքին. և հրաժարեալ 'ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովքն, բերէր առ եպիսկոպոսն Աստուծոյ։ Որ յորոց նախընկալն եղև, առաւ արկեալ նոցա զնշանագիրն աստուածատուր. վասն որոյ բաղում իսկ գովութիւնք յեպիսկոպոսացս սրբոց և յամենայն եկեղեցեաց բարձրանային 'ի փառս Աստուծոյ, և 'ի մխիթարութիւն աշակերտելոցն ոչ սակաւք։ Յորոց թուղթս աւետագիրս հանդերձ շնորհատուր պարգևօքն, և ամենայն իւրայիւքն, 'ի շնորհացն Աստուծոյ Ճանապարհորդ լինէր. զօթևանօք անցեալ աջողութեամբ և հոգելից ուրախութեամբ եկեալ հասանէր 'ի Հայաստան աշխարհն, 'ի կողմանս այրարատեան գաւառին, առ սահմանօք Նոր քաղաքին, 'ի վեցերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց մեծաց։

Եւ ոչ այնպէս մեծն Մովսէս զուարճանայր յէջս սինէական լերինն. չասեմք թէ առաւելագոյն. Քանզի Աստուծոյ առեալ և աստուածազիր հրամանն 'ի բազուկս այրն աստուածատես, 'ի լեռնէն իջանէր. այլ վասն վրէժագործ ժողովրդեանն, որոց թիկունք 'ի տէրունիան, և կործան յերկիր, տիրադրուժք յիւրեանց կուռս ձուլածուին երկիրպագանէին, և զնորին հրամանաբերն սրտառուչ սրտաբեկ լացուցին. քանզի 'ի տախտակացն խորտակելոյ յայտնի եղեալ տեսանէր բերելոյն թախծութիւնն։ Իսկ այսր երանելւոյ՝ վասն որոյ Հաւեալքս յարդարին, ոչ ըստ այնմ օրինակի որ անդն գործեցան, այլ ինքն իւրով լցեալ հոգևոր մխիթարութեամբ՝ կարծեալ զընդունելոցն յօժարութիւնն, և ընդունելոյն յուսով ուրախութեան՝ դասաւորութիւն Հանապարհացն աւետաբեր։

Բայց մի՞ զբ յանդգնագոյն վասն ասացելոցն զմեզ համարեսցի. թէ զիարդ զայր մի խոնարհագոյն ընդ մեծին Մովսէսի, ընդ աստուածախօսին, սքանչելագործին նմանեցուցեալ հաւասարեաց. որով թերևս սոգտանիցեմք։ Եւ կարեմք այլ աւելի հաւատով. քանզի և չկայ ինչ 'ի վերայ

յայտնեաք և ծածկանաք զաստուածականն խոտել ։ Քանզի միոյն Աստուծոյ ամենազօրի շնորհք առ ամենայն ազգս երկրածնաց մատակարարին ։

Եւ արդ եկեալ յիշելին մերձ 'ի թագաւորական քաղաքն , ազդ լինէր թագաւորին և սրբոյ եպիսկոպոսին ։ Որոց ասեալ զամենայն նախարարագունդ աւագանւոյն ամբոխ , 'ի քաղաքէն ելեալ՝ պատահէին երանելւոյն զափամբ Աստուծոյն ։ Եւ զցանկալի ուղղոյնն միմեանց տուեալ . ուսաի և բարբառօք ցնծութեան և երգօք հոգևորօք , և բարձրաղոյն օրհնութեամբք 'ի քաղաքն դառնային . և զաւուրս տօնական ուրախութեամբ անցուցանէին ։

Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ 'ի թագաւորէն սկիզբն առնելոյ զխուժադուժ կողմանն Պարսից , ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն Ճիւաղութեան , այլ և վասն խեղբեկագոյն և խոշորագոյն լեզուին՝ դժուարամատոյցք էին։ Ընդ 'ի յարդարել և զնոցա հարուստ ամացն ծնունդս՝ առեալ պարզախօսս հոետորաբանս , կրթեալս աստուածատուր իմաստութեանն ծնունդս կացուցանէին ։ Եւ այնպէս միջամուխ եղեալ հանդամանաք օ-

բինապատգամայն , մինչև բնաւ արտաքոյ
իւրեանց բնականութեանն գերծանել ։ Եւ
'ի ձեռն առեալ այնուհետև աստուածա-
գործ մշակութեամբ զաւետարանական ա-
ռուեստն՝ 'ի թարգմանել 'ի գրել և յու-
սուցանել , մանաւանդ հայեցեալ 'ի տեսո-
նաբարբառ հրամանացն բարձրութիւնն ,
որ առ երանելին Մովսէս եկեալ , վասն
ամենայն իրացն եղելոյ , յաստուածեղէն
պատգամացն բարձրութիւն աւանդելոյն՝
մատենագրել առ 'ի պահեստ յաւիտեանցն
որ զալոցն էին . նոյնպիսիք և այլոց մար-
գարէիցն հրամայեալք ։ "Եւ , ասէ , քար-
տէզ նոր մեծ , և գրեա 'ի նմա գրչաւ
դպրի"։ Եւ այլուր , թէ "Գրեա զտեսիլդ
'ի տախտակի , և 'ի գիրս հաստատեա" ։
Իսկ Դաւիթ յայտնապէս ևս վասն ամ-
նայն ազգաց՝ զվիճակ աստուածատուր օ-
րինացն նշանակէ ասելովն , թէ "Գրեսցի
յազգ յայլ" ։ Եւ թէ "Տեր պատմեսցէ
գրովք ժողովրդոց" ։ Զոր եկեալ կատա-
րեաց ամենափրկիչն Քրիստոս շնորհատուր
հրամանաւն , եթէ "Գնացէք ընդ ամենայն
ազգս" ։ Եւ եթէ "Քարոզեսցի աւետա-
րանս ընդ ամենայն տիեզերս" ։ Ուստի և
երանելի հարցն մերոց համարձակութիւն
առեալ յուսալից փութով , և երևելի և

արդիւնակատար ըստ աւետարանին՝ վի-
րեանց մշակութիւնն ցուցանեն։

Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի
աշխարհս Հայոց անպայման աքանչելի լի-
նէր. յորում անկարծ ուրեմն օրէնսու-
սոյց Մովսէս՝ մարգարէական դասուն, և
յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքե-
լական դնդոմն, հանդերձ աշխարհակեցոյց
աւետարանաւն Քրիստոսի, միանգամայն
եկեալ հասեալ 'ի ձեռն երկուց հաւատա-
ցելոցն՝ հայաբարբառք հայրենախօսք զլ-
ուսան։

Ընդ էր այնուհետև սրտալիր ուրախու-
թիւն և ակնակայել տեսիլ հայելոյն։
Քանզի երկիր, որ համբաւուցն անդամ
օտար էր կողմանցն այնոցիկ, յորում ա-
մենայն աստուածագործ աքանչելագործու-
թիւնքն գործեցան, առժամայն վաղվաղա-
կի ամենայն իրացն եղելոց խելամուտ լի-
նէր։ Ոչ միայն ժամանակաւ պաշտեցե-
լոցն, այլ և յառաջագոյն յաւիտենից,
և ապա եկելոցն սկզբանն և կատարածի,
և ամենայն աստուածատուր աւանդու-
թեանցն։ Իսկ իբրև զչափ առեալ զիրացն
հաստատութեան, և համարձակագոյն և
առաւելագոյն զաշակերտութիւնն նորապիւս
վարդապետութեանն՝ խմբէին ուսուցանել

և թեքել , և պատրաստական քարոզու-
թեանն անգէտ մարդկան յօրինել ։ Որոց
և ինքեանք իսկ 'ի կողմանց և 'ի գաւա-
ռաց Հայաստան աշխարհին յորդեալք և
դրդեալք հասանէին 'ի բացեալ աղբիւրն
դիտութեանն Աստուծոյ ։ Քանզի յԱյրա-
ռատեան գաւառին 'ի կայս թագաւորացն
և քահանայապետացն , բղխեցին Հայոց
շնորհք պատուիրանացն Աստուծոյ ։

Անդ էր յիշելի և մարգարէականն , ե-
թէ "Նշլիցի անդ աղբիւր բղխեալ 'ի տան
Դաւթի" ։ Որ և սկսան իսկ սիւնք եկե-
ղեցւոյ՝ միջամուխ ձեռամբ զգործ աւե-
տարանչացն Քրիստոսի գործել . դումա-
րել 'ի կողմանս , 'ի գաւառս , 'ի տեղիս
տեղիս Հայաստան ազգին , դաս դաս զա-
շակերտեալսն Ճշմարտութեանն , զհաստա-
տելոցս 'ի կատարումն դիտութեան , բա-
ւականս և առ 'ի զայլսն զեկուցանելոյ ։
Որոց կանոն և օրինակ զիւրեանց անձանց
արդասիս եդեալ , և պատուիրեալ կալ 'ի
նմին կանոնի . և իւրեանց անդէն զաո-
ընթերակայ արքունիսն , հանդերձ ամե-
նայն ազատագունդ բանակիւն՝ աստուա-
ծեղէն իմաստութեամբն վարդապետեալ ։
Ուստեալ երանելւոյն Սահակայ զմամիկո-
նեան որեարն՝ 'ի վարժս վարդապետու-

թեանն պարապեցուցեալ . որոց առաջնոյն Վարդան անուն էր , որ և Վարդկան կոչէր : Նոյնպէս և զամենայն ոգի ջանայր յերիւրել հասուցանել 'ի գիտութիւն ճշմարտութեան :

Յետ այնորիկ առնոյր հաւանութիւն երանելին Մաշթոց . որպէս զի տէր եպիսկոպոսն 'ի Կայենականն . և նա 'ի սիրուս հեթանոսաց զբանն կենաց սերմանիցեն : Եւ հրաժարեալք 'ի նոցանէն հանդերձ այլովք ևս օգնականօքն , որոց առաջնումն Տիրայր անուն 'ի Խորձենական գաւառէն , և երկրորդին Մուշէ անուն 'ի նահանգէ Տարոնոյ , որք էին սուրբք և զուարթագոյնք . հանդերձ այլովք ևս սպասաւորօք աւետարանին , զոր չեմք բաւական ըստ անուանցն նշանակել . որով յանձն եղեալ երանելին շնորհացն Աստուծոյ , երթեալ ի Ջանէր առ ոտս տանն Գողթան՝ յառաջին դաստակերտն իւր : Եւ անդ ընդելական սովորութեամբն 'ի կիր արկեալ զվարդապետութիւնն՝ հաւասարութեամբն բարեպաշտին Շաբաթայ , լի առնէր զդաւառն ողջունիւ աւետարանին Քրիստոսի . և կարդէր յամենայն դիւղս դաւառին՝ դասս սրբոց վանականաց : Որում և հասեալ ժամանեալ հայրաբարուին Գտայ , որդւոյ

Հաբաթայ առն քրիստոսասիրի, բազում սպասաւորութիւն իբրև հաւասարի որդւոյ վարդապետին տանէր։

Ապա յետ այնորիկ 'ի սահմանակիցս 'ի սիւնական աշխարհն եկանէր. և անդ աստուածասէր հնազանդութեամբ ընկալեալ զնա իշխանին Սիւնեաց, որ էր Վաղենակ անուն, բազում օգնականութիւն զտեալ 'ի նմանէն վասն իրացն առաջի արկելոցն, մինչև հասանել նմա բովանդակ 'ի վերայ սահմանաց Սիւնեաց։ Եւ ժողովեալ մանկունս առ 'ի նիւթ վարդապետութեանն, առաւել զդազանամիտ ըզվայրենագոյն զՀիւաղաբարոյ կողմանցն. և այնչափ փոյթ 'ի վերայ ունելով՝ և դայեկաբար սնուցանել և խրատել, մինչև 'ի նոցունց իսկ 'ի վայրենեացն եպիսկոպոս տեսուչս եկեղեցւոյն Սիւնեաց կարգել. որոյ անունն կոչէր Ընանիաս. այր սուրբ և երևելի հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ. ապա և զերկիրն Սիւնեաց՝ դասուք վանականաց ընոյր։

Յորում ժամանակի պարգևեալ յԱստուծոյ, հասանէր 'ի զլուխ իշխանութեանն Սիւնեաց՝ քաջն սիսականն Վասակ. այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աս-

տուծոյ։ Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեանն, իբրև որդւոյ առ Հայր՝ հպատակութիւն ցուցեալ, և ծառայեալ ըստ աւետարանին վայելչութեան. մինչ 'ի վախճան զՀրամայեալսն 'ի գործ բերէր։

Դարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ, հոդ 'ի մտի արկանէր սիրելին Քրիստոսի՝ և վասն բարբարոսական կողմանն. և առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին, ըստ շնորհեցելոյ նմա 'ի Տեառնէ։ Գրէր կարդէր և օրինօք յարդալէր. և առնոյր ընդ իւր զոմանս լաւագոյնս յաշակերտաց իւրոց, յարուցեալ դնայր ինչանել 'ի կողմանս Վրաց. և երթեալ յանդիման լինէր թագաւորին՝ որում անուն էր Բակուր, և եպիսկոպոսի աշխարհին՝ Մովսէս։ Եւ առաւելագոյն հնազանդեալ նմա ըստ օրինացն Աստուծոյ՝ թագաւորին և զօրացն, հանդերձ ամենայն գաւառօքն։

Եւ նորա զիւր արուեստն առաջի արկեալ՝ խրատէր յորդորելով. յորում և յանձն առեալ ամենեցուն զխնդրելին կատարել։ Եւ գտեալ զայր մի թարգման վրացերէն լեզուին, որ անուանեալ կոչէր Ջաղայ, այր զրագէտ և Հշմարտահաւատ.

հրաման տայր այնուհետև արքայն Վրաց՝ 'ի կողմանց կողմանց, և 'ի խառնիճաղանջ գաւառաց իշխանութեան իւրոյ՝ ժողովել մանկունս՝ տալ 'ի ձեռն վարդապետին։ Զոր առեալ՝ արկանէր 'ի բովս վարդապետութեանն. և հոգևոր սիրոյն եռանդմամբ՝ զաղտ և զժանգ շարաւահոտ դիւացն և զնոտիագործ պաշտամանն 'ի բաց այնչափ անջատեալ 'ի հայրենեաց իւրեանց՝ և անյիշատակ ցուցանել, մինչև ասել՝ թէ "Մոռացայ զժողովուրդ իմ և զտուն հօր իմոյ"։

Եւ արդ զնոսա, որ յայնչափ 'ի մասնաւոր և 'ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միով աստուածաբարբառ պատմամբն մի ազգ կապեալ՝ փառաբանիչք միոյ Աստուծոյ յօրինէր, յորոց և իմ անարժանիս՝ եղեալ 'ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ. որոց առաջինն Սամուէլ անուն, այր սուրբ և բարեպաշտօն՝ եպիսկոպոս կացեալ տանն արքունականի։ Իսկ իբրև ընդ ամենայն տեղիս Վրաց կարգեալ զգործ աստուածպաշտութեանն, այնուհետև հրաժարեալ 'ի նոցանէ՝ դառնայր յերկիրն Հայոց. և պատահեալ Սահակայ կաթուղիկոսի Հայոց, պատմէր նմա զողջութենէ եղելոցն, միանդամայն փառաւոր առնելով զԱստուած զմեծանունն Քրիստոս։

Ապա դարձեալ ելանէր շրջէր զտեղեօք կարդելեօք , և զգաւառօքն աշակերտելովք աշխարհին Հայոց , զուարթացուցանել , նորոգել , հաստատել ։ Եւ յորժամ այնպէս ընդ ամենայն տեղիս՝ լի առնէր զսուրբ աւետարան Տեառն , և ամենեցուն զդուշացուցեալ զկենաց Ճանապարհն վարելոյ , խորհուրդ առնոյր այնուհետև վասն կէս ազգին Հայոց , որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հռոմոց ։ Եւ փութացեալ գնայր հանդերձ աշակերտօք բազմօք , անցանել 'ի կողմանս Յունաց . և վասն առաւելագոյն բարեգործ համբաւուց՝ յառաջագոյն զնմանէ անդ 'ի հիւսիսական կողմանց հռչակելոց , առաւել միամտութեամբ ընտանեբար յեպիսկոպոսաց աշխարհին , և յիշխանաց և 'ի գաւառականացն պատուեալ . մանաւանդ 'ի սպարապետէն աշխարհին , որ անուանեալ կոչէր Ընատոլիս 'ի մուտ Ճանապարհին . որ զերս առաջի եդեալ զրով՝ ցուցանէր կայսերն , որում անուն Թէոդոս կոչէին , որդի Արկադու կայսեր . ուստի և հրաման ելանէր , վայելուչ մեծարանօք զՍուրբն՝ Ակուիտ անուն կոչելոյ ։

Իսկ նորա զբաղմութիւն աշակերտացն տարեալ 'ի քաղաքն Մելիտինացւոցն ,

յանձն առնէր սրբոյ եպիսկոպոսի քաղաքին, որ Ակակիոսն կոչէին. և զլխաւոր աշակերտացն՝ թողոյր զայն, որում Ղեւոնդէոսն կոչէին. այր հաւատարիմ և ճշմարտապաշտ։ Նա առեալ երանելոյն զպատուական եպիսկոպոսն Դերջանոյ, որոյ անուն կոչէր Գ՛ինթ, և սակաւս յաշակերտաց անտի, և ելեալ յանարուոյն դիմնական և բազում պատիւ զտեալ, հասանէին 'ի թագաւորական քաղաքն Կոստանդինական, զորմէ իսկոյն պատմէին յարքունիսն. և մտեալ առաջի պատուական աթոռոյն յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն և հայրապետին սրբոյ Կաթուղիկոսին աշխարհամուտ դրանն, որում Ատտիկոս կոչէին. յորոց և զտեալ շնորհս՝ հրամայեալ լինէր ժամանակս ինչ անդէն 'ի տիեզերական քաղաքին մնծարել դարմանօք կարգելովք, յեկեղեցւոյն և յարքունեաց և 'ի պատուական իշխանաց քաղաքին։

Նա ապա յետ Պասեքին կատարելոյ՝ ցուցեալ կայսերն զպիտոյից զհանգամանս, և առեալ զանընդդիմակաց հրամանն հանդերձ սակերօք կայսերագիր նշանակելովք՝ վասն մանկտոյն յաշակերտութիւնն, առ 'ի կէս ազգէն Հայոց ժողովելոյ, և վասն

ժանտագործ ազգին բարբարոսաց , և եկե-
ղեցեաց հաստատութեան , և մեծամեծ
պարգևօք պատուել ։ Զ՝ ասն որոյ հաւանե-
ցուցեալ Ճշմարտին զարքունիսն , անընկալ
թողոյր . և երկիրպագեալ ծիրանափառ օ-
գոստականացն , և սրբոյ կաթուղիկոսին ,
և ընկալեալ ողջոյն յեկեղեցւոյն և յերևե-
լի իշխանացն քաղաքին , և ամենայն իւ-
րայովքն յաջողեալք՝ ելանէին 'ի դեսպակս
'ի կատս արքունատուրս ։ Յս մեծաւ շքով
և բազում վայելչութեամբ՝ ունէին զՃա-
նապարհս արքունականս , և ամենայն քա-
ղաքայն պատահելով , 'ի քաղաքին պայ-
ծառագոյն երևէին . և մեծամեծ պարգևս
զտեալ , գային հասանէին 'ի ժամադիր
կողմանս . և անդէն վաղվաղակի պատա-
հեալ սպարապետին Հայոց , հանդերձ սա-
կերօք կայսեր յանդիման լինէին ։ Յս նո-
ցա առեալ սակերս կայսերական նշանօք ,
փութայր վաղվաղակի զհրամանն կատա-
րել . և հրեշտակս արձակեալ այնուհետև
'ի գաւառս կէս ազգին Հայոց՝ յիշխանու-
թեանն կայսեր , բազմութիւն մանկաւոյ
ժողովել , և նոցին ոռՃիկս կարգել 'ի պա-
տեհագոյն տեղիս . յոր և երանելին ըզ-
վարդապետութիւնն իւր 'ի գործ արկեալ ,
և ժողովելոցն քարոզս յուցանէր ։

Ապա յետ այնորիկ ձեռն արկանէր ըզ-
գժպատեհ և զկամակոր Բարբարիանոս
աղանդն քննելոյ . և իբրև ոչինչ գտանէր
հնարս յուղղութիւն ածելոյ , առեալ 'ի
գործ արկանէր զթշուառացուցիչ գաւա-
զանն , ծանրագոյն պատուհասիւք 'ի բան-
գըս , 'ի տանջանս , 'ի գելարանս : Իսկ
յորժամ այնու ևս պակասեալք 'ի փրկու-
թենէն զտանէին , խորտակեալս ապտխան-
ձեալս , մրեալս և զունակ զունակ խայ-
տառակեալս , և յաշխարհէն կորզէին :

Իսկ երանելոյն զիւր վարդապետութեանն
պայման արարեալ՝ սակեալ և վճարեալ ,
և բազում շնորհագիր մատեանս զհարցն
եկեղեցւոյ ստացեալ , ծովացուցանէր ըզ-
վարդապետութեանն զխորութիւն , և լցեալ
զեղոյր ամենայն բարութեամբք :

Յայնմ ժամանակի եկեալ դիպէր նմա
այր մի երէց աղուան ազգով , Բենիամէն
անուն . և նորա հարցեալ և քննեալ ըզ-
բարբարոս զբանս աղուաներէն լեզուին ,
առնէր ապա նշանագիրս , ըստ վերնապար-
գև կորովի սովորութեան իւրում . և յա-
ջողութեամբ Քրիստոսի շնորհացն , կար-
գեալ և հաստատեալ կշռէր : Յետ այնո-
րիկ հրաժարեալ յեպիսկոպոսաց և յիշ-
խանաց աշխարհին և յամենայն եկեղեցեաց .

ետ որս թողեալ վերակացուս հաւատացեալ-
ոցն՝ զերկուս ոմանս յիւրոց աշակերտացն ։
որ առաջնոյն Անուանք անուն էր , և երկ-
րորդին Դանան՝ արք կրօնաւորք և յառա-
ջադէմք յաւետարանական սպասաւորու-
թեանն ։ զորս յանձն արարեալ շնորհացն
Աստուծոյ՝ անդէն զետեղէր ։ Եւ՝ ինքն
բազում աշակերտօք դայր անցանէր 'ի կող-
մանս Հայոց մեծաց ։ և հասեալ 'ի Նոր
քաղաքն յանդիման լինէր սրբոյ եպիսկո-
պոսին Սահակայ , և թագաւորին Հայոց ,
որում անուն Արտաշէս կոչէին և ամենայն
բանակին ։ և պատմեալ նոցա զգործս
կողմանցն այնոցիկ ըստ աջողութեանց
շնորհացն Աստուծոյ , դադարէր անդ ա-
ւուրս ինչ՝ մխիթարէր վասն հոգևոր ան-
ձուկն սփռելոյ ։

Եւ ապա յետ այնորիկ հրաժարեալ
գնալ 'ի կողմանս Աղուանից , և երթեալ
ի Ջանէր յաշխարհն ։ և հասեալ 'ի թա-
գաւորական տեղիսն , տեսանէր զսուրբ ե-
պիսկոպոսն Աղուանից , որում անուն Ն-
րեմիա կոչէին , և զնոցին թագաւոր , ո-
րում Արսվաղ էր անուն , ամենայն ա-
զատօք հանդերձ ։ որոյ առաւել հպատա-
կութեամբ ընկալեալ վասն անուանն Քրի-
ստոսի ։ Ապա հարցեալ 'ի նոցանէ ,

առաջի եդեալ վասն որոյ եկեալն էր , և նոցա երկոցունց զուգացելոց եպիսկոպոսին և թագաւորին՝ յանձն առեալ դպրութեանն հնազանդելոյ ։ Տային և ս հրաման՝ 'ի գաւառաց և 'ի տեղեաց իշխանութեանն իւրեանց , բազմութիւն մանկանց՝ յարուեստ դպրութեանն ածել և գումարել՝ ըստ արժանաւոր և պատեհ տեղեաց , դասս դասս դպրոցաց , և ոռճիկս կարգել 'ի դարմանս ։

Իսկ իբրև հրամանն այն , արդեամբք և գործովք յանկ եւանէր , ապա այնուհետև երանելոյն Գրիգորի եպիսկոպոսի 'ի ձեռն առեալ՝ վաղվաղակի գաստուածային գրոց թարգմանութիւնս 'ի գործ արկանէր , որով անդէն յակաս թօթափել , վայրենամիտ և գաստարկասուն և անհամնաբարոյ աշխարհն Աղուանից , մարգարէապէտք և առաքելածանօթք և աւետարանաժառանգք լինէին , և ամենայն աւանդելոյն Աստուծոյ , ոչ իւիք անտեղեակք ։ Գարձեալ առաւել ևս երկիւղածն յԱստուծոյ արքայն Աղուանից՝ միամիտ փութով հրաման տայր սատանայակիր և դիւամոլ ազգին սասաիւ՝ թափել զերծանել յունայնավար հնացելոյն , և հնազանդ լինել ամենահեշտ լծոյն Քրիստոսի ։

Եւ յորժամ զայն արարեալ հաւատարութեամբ, և լցեալ զպիտոյն իւրեանց, զկամացն յօժարութիւն, ձեռնատու և ս եղեալ նմա սրբամատոյց վարդապետութեանն 'ի բաղասական կողմանս սրբոյ եպիսկոպոսին՝ որում Մուշեղ կոչէին, հրաժարէր ապա և 'ի թագաւորէն և յեպիսկոպոսացն և յամենայն եկեղեցւոյն Աղուանից։ Եւ զումանս յիւրոց աշակերտացն վերակացուս իւրեանց կացուցանէր, հանդերձ արամբ քահանայիւ արքունական դրանն, որում անունն Յովնաթան կոչէին, որոյ բազում յօժարութիւն 'ի վարդապետութենէն էր գտեալ, և յանձն առնելով զնոսա և զանձն՝ ամենապահ շնորհացն Աստուծոյ, խաղացեալ գայր 'ի կողմանցն Աղուանից, անցանել յաշխարհն Վրաց. և հանդէպ հասեալ գայր գարգմանական ձորոյն։ Ընդ առաջ լինէր նմա իշխանն Գարգմանից, որում Խուրս կոչէին, և ասպնջական եղեալ նմա աստուածասէր երկիւղածութեամբ, առաջի դնէր զանձն վարդապետին, հանդերձ իշխանութեամբն իւրով. առաւելագոյն իսկ վայելեալ 'ի հիւթ և 'ի պարարտութիւն վարդապետութեանն, յուղարկէ զերանելին ուր և երթալոցն էր։

Իսկ նորա անցեալ գիմեալ 'ի կողմանսն, առ որով ժամանակաւ Գրիգոր անուն թագաւորեալ Վրաց, որոյ առաւելապէս պայծառացուցեալ ծաղկեցուցանէր զվարդապետութիւնն. և նորա շրջեալ զամենայն աշակերտաւք, պատուիրեալ կալ 'ի Ճշմարտութեանն։ Յայնժամ իշխանին տաշրացւոց առն պատուականի և աստուածասիրի, որ անուանեալ կոչէր Աշուշայ, 'ի' ձեռն տայր նմա զանձն ամենայն զաւառովն իւրով. և նորա ամենսփիւռ վարդապետութիւնն, ոչինչ պակասութեամբ քան զայլոցն զաւառաց անցուցեալ, և յանձն արարեալ զնոսա սրբոյ եպիսկոպոսին Սամուէլի, այնմ զոր 'ի վերոյ նշանակեցաք, ինքն դարձեալ 'ի կողմանս Հայոց մեծաց. և եկեալ 'ի սովորական տեղիսն, զընդելական ողջոյնն սրբոյն Սահակայ և ամենայն պատահելոցն տուեալ, պատմէր նոցա վասն այնր ևս նորագործ իրացն։ Որք իբրև լուան, առաւել գոհանային զպարգևացն Աստուծոյ։

Յետ այնորիկ ուշ եդեալ երկոցունց երանելեացն՝ զիւրեանց ազգին զդպրութիւն առաւել յարդել և դիւրացուցանել, ձեռն 'ի գործ արկանէր 'ի թարգմանել և 'ի գրել մեծն Խաահակ՝ ըստ յառաջագոյն սա-

վորութեանն։ Որոց զարձեալ դէպ լինէր եղեալս երկուս յաշակերտացն՝ յուղարկել 'ի կողմանս Ասորոց 'ի քաղաքն Եդեսացւոց, զՅովսէփ, զոր 'ի վերոյն յիշեցաք, և երկրորդն Ղազնիկ անուն՝ յայրարատեան գաւառէն 'ի Կողբ գեղջէ, զի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս, հայերէն գրեալս դարձուցեն։

Իսկ թարգմանչացն հասեալ՝ ուր առաքեցանն, և կատարեալ զհրամանսն, և առ պատուական հարսն առաքեալ անցեալ զնային 'ի կողմանս Յունաց. ուր և ուսեալք և տեղեկացեալք, թարգմանիչս կարէին ըստ հելլենական լեզուին։

Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ դէպ լինէր ոմանց եղբարց 'ի Հայաստան աշխարհէս, գիմել իջանել 'ի կողմանս Յունաց, որ և Կ Լանդէս առաջնոյն անուն էր, և երկրորդին Կոբիւնս, և մատուցեալ յորէին Ղազնիկն, իբրև առ ընտանեգոյն սենդակից՝ 'ի կոստանդինական քաղաքին, և անդ միաբանութեամբ հոգևոր պիտոյիցն՝ զնոցին գիրն մեկնէին։ Որոյ յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն, և բազում շնորհագիր հարց յետ այնր աւան-

գութեամբք , և Նիկիական և Եփեսոսական կանոնօք գային երևելով աշխարհին Հայոց , և առաջի գնէին հարցն զսերեալ կտակարանսն Նիկեղեցւոյ սրբոյ ։

Իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական զրոց գումարութիւնն՝ կանխաւ յունական բարբառոյն 'ի Հայերէն դարձուցեալ , և բազում ևս զՀայրապետաց սրբոց զՃշմարիտ զիմաստութիւնն ։ Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Նզնակաւ՝ զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնս , հաստատեր Ճշմարիտ օրինակօք բերելովք , և շատ ևս մեկնութիւն զրոց թարգմանէին ։ Նաև այնպէս զամենայն ժամանակս իւրեանց՝ յընթերցուածս զրոց ծախէին հարքն՝ ըզտիւ և զգիշեր , և նովիմբ ծաղկեալք և շահաւետեալք՝ օրինակ բարեաց ուսումնասէր առընթերակայից լինէին . մանաւանդ զի ունէին պատուիրանս զդուշացուցիչս յաստուածակարդ պատգամաւորացն . յորոց առաջինն հրամայէ՝ թէ "Յօրէնս Տեառն խորհեսցիս 'ի տուէ և 'ի գիշերի". և երկրորդն հանգոյն պատուիրէ , թէ "Մի՛ զիր ընթերցուածոց միսիթարութեան վարդապետութեան , մի՛ անփոյթ առնել զշնորհացդ որ 'ի քեզ են . յայդ խորհեա

և 'ի դոյն յամենայնի . զայդ եթէ առնիցես և զանձն ապրեցուսցես , և զայնոսիկ որ քեզն լսիցեն" ։

Ապա յետ դարձեալ՝ այնպիսի առաւել և բարձրագոյն վարդապետութեամբն՝ սկրսեալ երանելոյն Աստուծոյ Ճառս յաճախապոյնս , դիւրապատում , շնորհագիրս , բազմադիմիս 'ի լուսաւորութենէ և 'ի հիւթոյ զրոց մարգարէականաց կարգել և յօրինել , լի ամենայն Ճաշակօք աւետարանական հաւատոյն Ճշմարտութեան ։ Որս բաղում նմանութիւնս և օրինակս 'ի յանցաւորացս ասասի , առաւելագոյն վասն յաղթութենական յուսոյն առ 'ի հանդերձեալսն՝ յերիւրեալ կազմեալ . զի հեշտընկաք և դիւրահասոյցք սխմարագունիցն , և մարմնական իրօք զբաղելոցն լինիցին , առ 'ի սթափել և զարթուցանել և հաստատիմն առ 'ի խոստացեալ աւետիսն քաջալերել ,

Եւ այնպէս զամենայն կողմանս Հայոց Վրաց և Աղուանից , զամենայն ժամանակս կենաց իւրոց , զամառն և զձմեռն զտիւ և զգիշեր՝ անվեհեր և առանց յապաղելոյ իսկ , իւրով աւետարանական և ողջապատում գնացիւքն՝ առաջի թագաւորաց և իշխանաց , և ամենայն հեթանո-

սաց և անընդդիմակաց 'ի հակառակորդաց՝ զամենափրկչին Յիսուսի անուն կրեաց յանձին։ Եւ զամենայն ողի քրիստոսա-զգեստ և հոգեղէն վառեաց, և բազում բանդսկանաց և կալանաւորաց և տագնապելոց 'ի բռնաւորաց թողութիւն արարեալ՝ կորզեալ զնոսա ահաւոր զօրութեամբն Քրիստոսի։ Եւ բազում մուրհակս անիրաւութեան պատառեաց, և բազում սըգաւորաց և կարճամտելոց՝ միսիթարական վարդապետութեամբն զակնկալ յուսոյն ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի նօթ ձեաց. և զամենայն միանգամայն յաստուածպաշտութեան պայման անդ փոխեաց։

Եւ դարձեալ բազում և անհամար դունդս վանականաց, 'ի շէնս և յանշէնս, դաշտականս և լեռնականս, անձաւամուտս և արգելականս բնակեցուցեալ հաստատէր։ Որս ընդ ժամանակս ժամանակս իւրով մարմնովն իսկ օրինակ ցուցեալ, առեալ զոմանս յաշակերտաց յիւրաքանչիւր մենաստանացն, և երթեալ լեռնակեաց սորամուտ ծակախիթ եղեալ. զաւօրէական զկերակուրն խոտաբուտ ճաշակօքն վճարէին. այնպէս վշտակեաց տկա-

րութեան զանձն տային։ Մանաւանդ ո-
րոց հայեցեալ 'ի միութարութիւն առաքե-
լական բանից, թէ "Յորժամ տկար եմ
վասն Քրիստոսի յայնժամ զօրացեալ լի-
նիմ"։ և թէ "Լաւ ևս լիցի պարծել
տկարութեամբս, զի բնակեսցէ յիս զո-
րութիւնն Քրիստոսի"։

Ընդ էր այնուհետև չարբենալ գինւով,
այլ առաւելուլ հոգւով, և պատրաստել
զսիրտս երկօր հոգևորօք, 'ի փառս և 'ի
գովութիւն Աստուծոյ։ Ընդ կրթութիւն
քաղցրուսոյց ընթերցուածոց՝ հոգեպա-
տում գրոց։ Ընդ քաջալերութիւն յոր-
դորական վարդապետութեան, առ 'ի յա-
ռաջադէմ ընտրութեանն՝ պսակիհաս քը-
րիստոսադիր կիսին։ Ընդ եռալ հոգւով
աստուածապաշտ ծառայութեամբ։ Ընդ
աղօթք աղերսալիք, և խնդրուածք հաշ-
տեցուցիչք վասն ամենեցուն կենաց՝ առ
մարդասէրն Աստուած, և նորին հոգե-
կրօն արուեստին՝ հանէր աւուրս բազում
յանապատ տեղիս։ մինչև ազդ լինէր յե-
ռիցանց, իրաց ինչ օգտակարաց եկեղե-
ցեաց կողմանցն այնոցիկ՝ հասանել յօգ-
նականութիւն շնորհօքն Քրիստոսի։ Յե-
նորա առանց իրիք զբաղելոյ՝ հանդերձ
գործակցօք ինչեալ 'ի թիկունս դիպացն

պատահելոյ , և վճարեալ զօրութեամբն Աստուծոյ , և յորդորագոյնս և պարարտաղոյնս և անփակ բերանով՝ զվտակս վարդապետութեանն 'ի սիրտս լսողացն ծաւալեցուցանէր ։

Եւ գայս առնէր զամենայն ժամանակս իւր , վասն անձին և վասն աշխարհի . քանզի սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք՝ զանձանց առաքինութիւնս՝ կանոն աշակերտելոյն դնել . մանաւանդ յուշ առնելով զտէրունականն՝ զմիոյ միայնոյ իմաստնոյն Աստուծոյ ։ "Քանզի սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել" ։ Որոյ բազում անգամ առեալ զաշակերտսն ուրոյն , և աննիւթական անձամբն օրինակ կարօտելոցն լինէր . յորժամ 'ի թաբօրական լերինն՝ զաւետեաց երանութիւնն տայր , և յորժամ 'ի նմին լերին զկանոնական զաղօթս առնէր , մինչդեռ աշակերտքն 'ի տիբերական ծովուն նաւէին ։ Եւ դարձեալ յաւուրս բաղարջակերացն յօրինական տօնին՝ զգիշերոյն աղօթքն և ցայգոյ , 'ի ձիթաստանեաց լերինն առանձինն մատուցանէր ։ Ուստի և յայտնի իսկ է և առանց խուզելոյ , եթէ՝ ոչ վասն անձին ամենատէրն , այլ համաշխարհի յուսումն զայն գործէր . որ է օրինակ ամենայն հնազան-

դելոց . վասն որոյ ասէր իսկ , "Ընթուն կացէք , զն մի 'ի փորձութիւն մտանիցէք"։

Իսկ արդ եթէ 'ի թեթևադոյն արուեստից՝ պակասադոյն են 'ի գիտութեանն ազգք երկրածնացս , ո՞րչափ այնմ՝ արուեստի ոք համարեսցի և անգիտանալ՝ որ ընդ Աստուած զնոսսն կատարէ . որով երանելին Պաւղոս ամենեցուն տգիտանալ ասէ , վասն որոյ զամենակեցոյց Հոգին 'ի թիկունս հասանել՝ անմունչ հեծութեամբ բարեխօս գիտէ ։ Իսկ արդ յորժամ ըսիցեմք , եթէ սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել՝ ապաքէն առնէ և ուսուցանէ , և ոչ եթէ զի պարզևեսցէ իմանալի է ։ Նա բարեխօսել նորա վասն սրբոց , և բարեխօսել Հոգւոյն սրբոյ առ 'ի վարդապետելոյ մեզ . զի ընդ միմանց բարեխօսելն գիտելի է . քանզի միապատիւ է աստուածականն և ոչ բազմաբար ։ Իսկ երանելի առաքելոցն ընկալեալ 'ի վարդապետութենէ Ճշմարտութեանն , նախ կարօտական անձանցն մատակարարէին , և ապա աշակերտացն բարձեալ տանէին . երբեմն առանձինն՝ և երբեմն ժողովրդովքն գումարելովք՝ զփառսն Քրիստոսի առաքելովքն բարձրացուցանէին . քանզի առաւել օգտակար իսկ է՝ յամենայն աշխար-

հակիր զԱստանաց առանձինն սահմանել՝ և միայն աստուածպաշտութեանն պարապել , զոր և մարդարէքն գործէին . որք 'ի Լերինս և յանապատս և 'ի փաստարս վիմաց՝ զաստուածեղէն կրօնիցն զծառայութիւնսն հարկանէին ։

Նոյնպէս և ամենայն հարքն՝ որք յաջորդեցան , յառաքելական կանոնաց կրեալ անձամբք զլաւութիւնս , բերէին վերջնոցս օրինակ . ուստի երանելիս այս բարձեալ էր զաւանդելոցն պատիւ , և ամենայն մատուցելոց առ նա՝ զնոյն պատուիրեալ գուշակէր ։ Եւ այնպէս յառաջ՝ ամենայն աստուածեղէն զանձուցն վայելչութեամբք ցեալք , պարարտացեալք , խաղացեալք կային 'ի բազում ժամանակս՝ նովին 'ի նոյն կանխեալք՝ 'ի նմին հանապազորդեալք ։

Յայնմ ժամանակի բերեալ երևեցան Հայաստան աշխարհին զիրք սուտապատումք , ընդունայնախօս աւանդութիւնք առն ուրումն հոռոմի , որում Թէոդիտոս անուն ։ Վասն որոյ սիւնհոդոսական հայրապետաց եկեղեցեացն սրբոց նշանակեալ ազգ առնէին՝ Ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ և Մաշթոցի ։ Եւ նոցա Ճշմարտասէր փութով զայն 'ի միջոց բարձեալ՝ աշխարհահալած արտաքոյ իւրեանց

մերժեցին . զի մի 'ի լուսաւոր վարդապետութիւնն՝ ծուխ ինչ սատանայական յաբիցէ ։

Յետ այնորիկ դէպ լինէր նոցին Ճշմարտութեամբ՝ երանելոյն Սահակայ յցեալ աւուրքք երկայն ժամանակաւք , և վայելչացեալ աստուածաբեր պաղոցն բարուքիւեամբք , յառաջնեանն ամի Յազկերտի որդւոյ Պռամայ՝ թագաւորի կացելոյ 'ի Պարսից աշխարհին , 'ի Բագրաւանդ գաւառի՝ 'ի դիւղ Բերոյայ , 'ի կատարել ամենեանն Գաւասարդի , որպէս և զօր ծննդեան երանելոյն յիշէին . յերկրորդ ժամու աւուրն , 'ի պաշտաման անուշահոտ իւղոյն , հանդերձ աստուածահաճոյ աղօթիւք՝ ծերունւոյն 'ի Քրիստոս աւանդեալ. հայեցեալ 'ի մարգարէին , որ ասէր , " 'Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ". և Ստեփաննոսի երանելոյ , որ ասէր , "Տէր Յիսուս , ընկալ զհոգի իմ" ։

Ուստ նմին օրինակի՝ և նորա ապստամբեալ զանձն և զմնացեալս՝ ամենապահ շնորհացն Աստուծոյ . զոր և առեալ վաղվաղակի ամենայն հանդերձելոյք , ձեռնասուն աստուածասէր պաշտօնէիցն իւրոց . որոյ գլխաւորին Երեմիա անուն ճանաչէր , այր սուրբ և բարեպաշտօն , հանդերձ աստուա-

ծառէր իշխանակնաւ միով , որ անուա-
նեալ կոչէր Դուստր , որ էր կին Ս արդանայ , զոր 'ի վերնոյն յիշեցաք , և բազում ամբոխիչ սրբոց ժողովոյ , բարձեալ զսուրբն սաղմոսիւք և օրհնութեամբ և հոգևոր բարբառով , յեռ սակաւ ինչ աւուրց ընդ տիւ և ընդ գիշեր 'ի Տարօն հասուցանէին մինչ 'ի բուն իսկ գիւղն Մշատիշատ : Եւ անդ 'ի մարտիրոսական խորանին յարկեալ սրբոցն , հանդերձ ամենայն անուշահոտ խնկօք եդեալ և կընքեալ քրիստոսադրոշմ կնքովն՝ և զօրինաւոր յիշատակն 'ի վերայ կատարեալ , այնուհետև իւրաքանչիւրն դառնային : Որոց և նոյնպէս ամի ամի գումարելովք 'ի նոյն ամսեան՝ զնոյն յիշատակն տօնախմբեն :

Իսկ Երանելի զուգականին լուեալ , զՄշատիշոյէ ասեմ , բազում անձկայրեաց տրտմութեամբ և արտօսրագութի ողբովք և ծանրաթախիծ սգովք պաշարեալ դնէր . զի թէ առաքեարն սուրբ , ոչ զտեալ առ ժամանն զընդելակիցն զՏիմոթէոս՝ անհանգիստ զհոգւոյն ասէ , որչափ ևս առաւել զմիանգամայն զհրաժարելոցն սատանիկ կիրս մնացելոցն է համարեալ : Բայց թէպէտ և միայնաւորութեանն տրտմութիւն չթողոյր զուարթանալ , սակայն զաւետարանա-

կան ընթացսն , և զվերակացութիւնն սրբոյ եկեղեցւոյ , շնորհօքն Աստուծոյ ա-ռանց պակասութեան տանէր , և առաւել փութայր զուն եդեալ՝ զամենեսեան յորդորելով առ բարեացն քաջութիւն : Եւ զդայդ և զցերեկ պահօք և աղօթիւք և ուժգին խնդրուածովք և բարձրագոյն բարբառովք՝ աստուածադիր պատուիրանացն հրամանս ուշ առնելով , զզուշացուցանելով ամենայն մարդոյ . մինչև բազմագոյնս և զգժուարագոյն վարուց կրթութիւնն . մանաւանդ զի և զմտաւ իսկ ածէր ըստ տէրունական հասակին զօր վախճանին . չտայր քուն աչաց և ոչ նիրհ արտեւանաց՝ մինչև հասանել 'ի հանդիստն Տեառն :

Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւրև զհոգեւոր եռանդն ածէր , և բազում թուղթս խրատագիրս և զդայուցիչս ընդ ամենայն գաւառս առաքէր , անդէն 'ի նմին ամի՝ յետ ամսոց վեցից անցելոց վախճանի երանելոյն Սահակայ , լինէր հանդերձ սրբով վարդապետով բանակն Հայոց յայրարատեան 'ի Նոր քաղաք , և նովին հոգեկիրօն վարուք հասանէր սրբոյն քրիստոսակոչ կատարումն , յետ սակաւ ինչ աւուրց հիւանդութեանն , յերեքտասաներորդ

գում ամենեանն Մեհեկանի ։ Եւ յորժամ որոշեալ 'ի միջոյ ձեռնասուն աշակերտաց և խառնեալ 'ի գունդն Քրիստոսի հասանէր, թեթեւացեալ և սթափեալ 'ի ցաւոյն՝ կանգնեալ նստաւ 'ի ժողովոյն միջի, և համբարձեալ զձեռն հանապազատաբած յերկինս՝ զամէն մնացեալսն յանձն առնէր շնորհացն Աստուծոյ. վասն նոցա օգնականութիւն հայցէր ։

Եւ անուանք գլխաւորաց աշակերտացն ժողովելոցն՝ են այս. առաջնում Յակոբէ, զոր և 'ի սկզբան գրեցաք. երկրորդին Թադիկ, արք զգաստք՝ զգուշագոյնք հրամանաց վարդապետութեանն ։ 'Ի գինաւորական կողմանն, առաջնումն Յահան անուն յազգէն Ամատունեաց, որ էր հաղարապետ Հայոց մեծաց. և երկրորդին Հմայեակ՝ 'ի մամիկոնեան տոհմէն, արք պատուականք երկիւղածք հրամանակատարք վարդապետական հրամանաց ։ Եւ մինչդեռ ձեռք սրբոյն ընդ երկինս կարկառեալ էին, տեսիլ աքանչելի խաչանման լուսաւոր շողաւոր ձև երևէր 'ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր. զոր ամենայն ուրուք ինքնատես եղեալ, և ոչ առյընկերէ պատմեալ ։ Եւ սորա սրբոյն գսէռ և զմիաբանութիւն աւանդեալ, ոգ-

մերձաւորս և զհեռաւորս օրհնութեամբ պսակէր , և զհաճոյական աղօթս հաստատեայ 'ի Քրիստոս՝ հանդերձ :

Զոր առեալ Վահանայ և Ամայեկի կազմութեամբ վախճանելոյ , հանդերձ աշխարհական ամբոխիւ , սաղմոսիւք և օրհնութեամբ , և հոգևոր ցնծութեամբ , կանխեղօք վառելովք և ջահիւք բորբոքելովք , և ամենայն լուսաճաճանչ գնդիւն , և այնու խաչանշան լուսաւոր առաջնորդաց նշանաւն , Օշականն երանելին , և անդ 'ի մարտիրոսարանն մատուցեալ , զբինաւոր յիշատակն կատարեալ , ապա նշանն աներևոյթ լինէր , և նոքա իւրաքանչիւր գառնային : Իսկ յետ երից ամսոց անցելոց , յաջողեցան Վահանայ ամատունոյ , քրիստոսասէր փութով խորան սրանչելի կանգնել , տաշածոյ վիմաք քանդակելով , և 'ի ներքսագոյն խորանին զսրբոյն հանգիստն յօրինեալ , որոյ ընդարաս վայելուչս գունագոյնս պայծառատեսիլս ոսկով և արծաթով և ակամբք պատուականաք՝ 'ի յիշատակարան սեղանոյն կենդանարար մարմնոյ և արեանն Քրիստոսի պատրաստեաց . և ամենայն սրբովք 'ի միաւին գուժարերովք խաչակրօն վիայիցն Քրիստոսի , հանդերձ երանելեաւն Աշ-

թողիւ , 'ի հանդիստ խորանին փոխէ ։ Եւ զնորին աշակերտ Թադիկ անուն՝ զայր զգաստ և բարեպաշտօն , հանդերձ եղբարբք երանութեանն հասելոց՝ սպասաւոր սրբոյն 'ի փառս Աստուծոյ կարգէին , և զլխաւորս վերակացուս տեղապահս յայտ արարեալ հարցն կատարելոց որոց առաջինն Յովսէփ զլխաւոր ժողովոյն , և երկրորդն այլ աշակերտ Յովհան անուն . այր իսկ սուրբ վարդապետասէր և Ճշմարտապատում ։ Որում դէպ լինէր յետ վախճանի սրբոյն , բազում և ազգի ազգի փորձութեանց և կապանաւոր վշտաց . մինամարտիկ երկպատական բռնութեանն 'ի Տիզբոն քաղաքի , վասն Քրիստոսի յաղթութեամբ տարեալ համբերեաց . վասն որոյ և զխոստովանողական անուն ժառանգեաց . 'ի նոյն վերակացութիւնն դառնայր յերկիրն Հայոց ։

Իսկ բարեայապարտին Վահանայ , յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր . որ աշխարհածնիւն հայրենեացն սեպհական ոգի զտեալ , շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ , մերձաւոր կենակից վայելէր . և զի ըստ օրինակի զրելոյս առ 'ի մէնջ հարքն 'ի կատարումն գարձան ։

Ոչ եթէ 'ի հին համբաւուց տեղեկա-

ցեալ և մատենագրեալ զայս կարդեցաք , այլ որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն՝ և առընթերակայ հոգևորական գործոց , և լսող շնորհապատում վարդապետութեանն , և նոցին արբանեակ ըստ աւետարանական հրամանացն ։ Ոչ սուտապատում Ճարտարախօս եղեալ առ 'ի մերոց բանից զհօրէն իմոյ կարդեցաք , այլ զյաճախագոյնն թողեալ , և 'ի նշանագիմակացն քակելով զհամատուրսն կարդեցաք , որք ոչ միայն մեզ , այլև որ զատեանն ընթեռնուն յայտնի է ։ Բանդի չէաք իսկ հանդուրժողք՝ զամենայն արարեալսն կտակաւ զիւրաքանչիւրսն . այլ 'ի դիւրագոյն և 'ի հեշտագոյնս , յառաքելական անդր զանձինս պատսպարեցաք . որոյ անցեալ զբազմախուռն արգասեօք սրբոցն , առ 'ի մանրակտիտ առնելոյ ըզկարևորագոյնս պատմելոյ՝ զհանգամանս՝ ասացաք ։ Ոչ 'ի պատիւ ինչ սրբոցն Աստուծոյ , որք ամենապարծ և կենդանատուր խաչիւն ծանուցեալք յարդեցան , այլ յօրինակ քաջալերիչ հոգևոր ծննդոց իւրեանց . և որք նոքօք աշակերտելոց իցեն յազգս ազգաց ։

Նա արդ լինի համար հաւատոց երանելոյն ամք քառասուն և հինգ , և 'ի դրպ-

րութենէն Հայոց մինչև ցվախճան սրբոյն ամք երեսուն և հինգ, որք համարին այսպէս։ Թագաւորեալ Դիսմոնայ Պարսից սրբայի ամն վեց, և Յազկերտի ամն քըսան և մի. և յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ, վախճանեցաւ Նրանելին։ Նա արդ առնու համար ամաց սրբոց հաւատոց 'ի չորրորդում ամէն Կրմանայ սրբայի, մինչև ցառաջին ամն երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ, և դպրութեանն Հայոց, յութերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն։ Նա Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս ամէն։

ՎԵՐՋ

Р. Ц.
№ 6766